



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Պատգամ՝ շնորհավորանքի փոխարեն

Արդեն մեկ դարից ավելի է, ինչ Մարտի 8-ը նշվում է որպես Կանանց միջազգային օր: Ասել է թե՛ այս օրվա միջոցով խորհրդանշվում է տարբեր ժամանակներում կանանց ունեցած պայքարը՝ հասարակական, քաղաքական, տնտեսական թատերաբեմներում իրենց իրավունքների հաստատման ու իրենց խնդիրների վրա հասարակության ուշադրությունը բեռնելու համար:

Ժամանակի հետ ավելի ու ավելի արժեւորվեց կնոջ դերը, եւ նա սկսեց դիտվել ոչ միայն պարկեշտության, օջախին անմնացորդ նվիրածության, սերունդների բարոյապետ բարձր դաստիարակչու ենթատեսքում: Պայքարող տղամարդկանց կողքին աչքի ընկան կանանց այնպիսի կերպարներ, որոնցից շատերի անունները դարձան պատմություն: Կանայք բազմապատկեցին տղամարդկանց ուժն ու կարողությունը՝ միաժամանակ նեցուկ լինելով նրանց ու հաճախ էլ շարունակելով նրանց սկսած գործը: Այս առումով հատկապես հատկանշական է հայ կնոջ դերը, ով իր՝ մայր լինելու առաքելությունից զատ, դարձավ նաեւ հայ ֆիդայի, հայ ազատամարտիկ, տոկունության ու կամքի խորհրդանշ: Հայ կնոջ ձեռքով կյանքի կոչվեցին մի շարք բարեսիրական ու մարդասիրական ծրագրեր, հայ ժողովրդի վերքերը ամոքելու համար ստեղծվեցին կանանց այնպիսի կազմակերպություններ, որոնք իրենց անշեջելի հետքն ունեցան պատմության քառուղիներում: Վկան՝ Հայ օգնության միությունը, որն արդեն մեկ դարից ավելի է, ինչ կյանքի է կոչում իր ազգասիրական-բարեգործական ծրագրերը՝ իր արդար ճանապարհին հարթելով տարբեր խոչընդոտներ ու ապրելով որպես բարու ու լավի պայքարի մարտիկ:

Ինչպես ամեն մի ժամանակաշրջան ծնել է յուր հերոսին, այնպես էլ պատմության օրհասական ժամերին ծնվել են նաեւ տվյալ ժամանակի հերոսուհիները, ովքեր փառավորվել են իրենց կենսագրությամբ: Օրինակները խոսուն են՝ սկսած Վարդանանց կողքին անմահացած փափկատուն հայ տիկնանցից, հայոց թագուհիներից, ովքեր կարողացան լինել առաջնորդ, ղեկավարել բանակներ, փայլել իրենց խոհեմությամբ ու իմաստությամբ, Սուրբ Հռիփսիմեից ու Գայանեից, ովքեր հանուն հավատքի զոհվեցին իրենց պատիվն ու կարողացան հատկանշական դեր ունենալ քրիստոնեական հավատքի սերմանման գործում, Սոսե մայրիկից, ով ազգային իղձերի իրականացման ճանապարհին քայլ անգամ հետ չկանգնեց իր կողակցից ու հայոց ֆիդայիներից՝ դառնալով հայ հեղափոխական կնոջ տիպար, Շենիկցի Շաքեից, ով Սասունի առաջին ապստամբության ժամանակ մեծ դեր ունեցավ՝ կրելով Սահ կամ Ազատություն կարգախոսը, Ռուբինա Արեշյանից, ով կարողացավ մահն աչքերում մահափորձի դուրս գալ Սուլթան Համիդի դեմ, Դիանա Աբգարից, ում շնորհիվ Ճապոնիան 1918 թվականին ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը... Այս շարքն անսպառ է, այս շարքն իր պսակը ստացավ Արցախյան գոյապայքարի տարիներին, որտեղ հայ կինը ոչ միայն բուժուհի ու խոհարար էր, այլ նաեւ զենքը ձեռքին կռվող զինվոր: Ռազմի դաշտում տղամարդկանց կողքին անմահացան նաեւ շատ ու շատ կանայք:

Այսօր էլ հայ կինը, հիշելով եւ օրինակ քաղելով անցյալից, շարունակում է կերտել իր դժվար ու պատասխանատու ճանապարհը՝ իր ուրույն տեղն ու դերն ունենալով երկրի քաղաքական ու հասարակական դաշտում, կյանքի կոչելով համազգային ծրագրեր, դիմակայելով լուրջ խնդիրներ ու մարտահրավերներ, առաջարկելով խելամիտ լուծումների ուղիներ:

Անգնահատելի է հայ կնոջ դերն ու նշանակությունը կյանքի յուրաքանչյուր ոլորտում: Որտեղ հայ կինն է, այտեղ նաեւ խոհեմություն է, նվիրվածություն, ապահովություն եւ սրտացավ աշխատանք:

Սկսված այս միամսյակը ոչ բավարար, բայց ընդգծված ժամանակահատված է եւս մեկ անգամ արժեւորելու հայ կնոջ տեսակը, երախտապարտ լինելու այդ տեսակին: Ուրեմն՝ շնորհավոր, փառք ու պատիվ Ձեզ, հայ կանայք...



Դաշնակցություն հանուն Արցախի. շարունակվում է ՀՀԴ 124-ամյակին նվիրված տոնակատարությունների շարքը

«Դաշնակցություն հանուն Արցախի» հենց այս խորագիրն է կրում ՀՀԴ 124-ամյակին նվիրված տոնակատարությունների շարքը, որոնք մեկնարկել են Արցախում:

Մեծ եւ անուրանալի է Դաշնակցության ներդրումն Արցախի անկախության կերտման, ժողովրդավարության ինստիտուտի կայացման եւ Արցախի միջազգային ճանաչմանն ուղղված աշխատանքներում:

Եվ պատահական չէ, որ Դաշնակցության 124-ամյակին նվիրված միջոցառումները կրում են հենց «Դաշնակցություն հանուն Արցախի» նշանաբանը: Տոնակատարության հերթական հանգրվանը Արցախի Ասկերան քաղաքն էր, որտեղ մարտի 6-ին հանդիսավոր նշվեց ՀՀԴ 124-ամյակը:

Միջոցառման սկզբում ներկաներն այցելեցին Ասկերանի հուշահամալիր եւ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Արցախյան պատերազմում նահատակված ազատամարտիկներին:

Այնուհետեւ տեղի ունեցավ երդման արարողություն: Հատկանշական է, որ

Արցախում առաջին անգամ ՀՀԴ շարքերը համալրեց ազգությամբ ֆրանսիացի, հայ ազգի բարեկամ, այժմ արդեն Արցախի քաղաքացի Միշել Թանկերգը:

ՀՀԴ 124-ամյակին նվիրված տոնակատարությունը շարունակվեց Ասկերանի շրջվարչակազմի մեծ դահլիճում:

Միջոցառմանը ներկա էին ՀՀԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, ԼՂՀ Ազգային ժողովի «Դաշնակցություն» խմբակցության պատգամավորներ, Արցախի ԿԿ անդամ, Ասկերանի քաղաքապետ Ալյոշա Գաբրիելյանը, ԼՂՀ Ասկերանի շրջվարչակազմի ղեկավար Սերգեյ Գրիգորյանը, պաշտոնատար այլ անձինք:

Շնորհավորելով ներկաներին՝ «Բերդ» կոմիտեի ներկայացուցիչ Գեղամ Գրիգորյանը նշեց, որ հայ ազգի համար ճակատագրական պահերին ՀՀԴ-ն միշտ սատար է կանգնել հայրենիքին՝ չխնայելով ոչինչ:

«Ավելի քան 124 տարի ՀՀԴ-ն պարզ է իր կռվի դրոշմ հանուն Միացյալ Հայաստանի: Դաշնակցության շարքերը համալրողներին միշտ միացրել է գաղա-

փարը: Նրանց համար Դաշնակցությունը բանակ է, կարգապահությունը՝ անշեղելի օրենք»,- նշեց նա:

ԼՂՀ Աժ պատգամավոր, ՀՀԴ Արցախի ԿԿ անդամ Վահրամ Բալայանը, անդրադառնալով Դաշնակցության առաքելությանը, նշեց, որ մեկ հարյուրամյակից ավելի է արդեն, ինչ Դաշնակցությունը կոչված է իր ուսերին տանելու հայ մարդու հոգսը, որպեսզի հայոց երկրում՝ Մեծ Հայքի տարածքում, լինի պետականություն, հայ մարդը ունենա արժանավայել կյանք:

«Ասում են՝ Դաշնակցությունը եւ Արցախը բանական դաշնակիցներ են: Սա, իրոք, այդպես է, դա գալիս է ոչ թե այսօրվա իրողությունից, այլ՝ հեռուներից: Արցախահողի մեջ ստած է պետականություն ունենալու, ազգային-ազատագրական պայքար ծավալելու, երկիր շենացնելու գաղափարը»,- նշեց Վահրամ Բալայանը:

Միջոցառմանը եզրափակվեց տոնական համերգով:

Նոր վեկտորներ արտաշխարհի հետ համագործակցության քաղաքական – տնտեսական հարթույթներում



ՀՀԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը վերջերս գտնվում էր Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում:

Նա այցելել է նաեւ Արաբական Միացյալ Եմիրություններ եւ Զուվեյթի Պետություն...

Կարդացեք 2-րդ էջում

ՀՀԴ ներկայացուցիչները հանդիպել են Եվրամիության դեսպանների հետ



Հայաստանում Եվրամիության պատվիրակության նախաձեռնությամբ՝ ՀՀԴ ներկայացուցիչներ Արմեն Ռուստամյանը, Ադվան Վարդանյանն ու Լիլիթ Գալստյանը հանդիպեցին Հայաստանում հավատարմագրված Եվրամիության դեսպանների հետ:

Կարդացեք 3-րդ էջում

